

«Իպն Մնբատ գրեց ալ-Աֆշինի, անոր բսելով որ Բարակ իր հետն է, իր բերդին մէջ: Ալ-Աֆշին պատասխանեց. Եթէ ասիկա նիշտ է, վերջնականապէս քեզի համար նպատաւոր պիտի ըլլայ Հաւատացեալներու Հրամանատարին (Աստուած զինքը զօրացնէ) եւ ինծի նկատուաւր. եւ գրեց որ ան (Իպն Մնբատ) լաւ պիտի վարձատրուի: Յետոյ ան նկարագրեց Բարակը իր մտերիմներէն մէկուն, որուն վրայ կը վստահէր, եւ զայն գրեց Իպն Մնբատի, եւ վերջնոյս գրեց բացատրելով որ իր մտերիմներէն մին իրեն կը զրկէ՝ որպէսզի Բարակը տեսնէ ու վաւերականացնէ իրեն տրուած տեղեկութիւնը»:

«Իպն Մնբատ չուզեց որ Բարակի կասկածները արթնան, որով ըսաւ մարդուն. Քեզի համար գայն տեսնել անկարելի է, բացի այն ատենէն երբ ան գրադած է իր նաշով: Ան կը նաշէ ինծի հետ եւ երբ կը տեսնես որ մեմֆ նախանաշ կ'ուզեմֆ՝ հագուէ խոհարարներուն վերաբերող հագուստով, որոմֆ մեզի հետ եմ, որպէսզի մեր բնիկներուն երեւոյթը ունենաս: Յետոյ եկուր իբր քէ դուն կերակուր կը բերես կամ բան մը կը տանիս, որովհետեւ ան գրադուած պիտի ըլլայ իր ուտելիքով եւ դուն զինքը ցանկութեանդ համաձայն պիտի քննես. յետոյ դարձիք եւ տիրոջ տեղեկագրէ »:

«Ըստ այնմ ալ մարդը կատարեց ճաշի ժամանակ. Բարակ զլուխը վերցուց եւ անոր նայեցաւ. բայց չճանչնալով զայն՝ հարցուց. Ո՛վ է այս մարդը»:

«Իպն Մնբատ պատասխանեց. Խորասանէն մարդ մըն է, քրիստոնեայ մը, որ մեզի կապուած է ժամանակէ մը ի վեր, եւ Ուրսուսանիին հասկցուց թէ ինք ինչ կ'ըսէր »:

«Այն ատեն Բարակ ըսաւ մարդուն. Երբէ՞ն ի վեր հոս կը գտնուիս»:

«Այսինչ եւ այսինչ տարիէն ի վեր, պատասխանեց նա»:

«Ի՞նչպէս կ'ըլլայ որ դուն հոս կը մնաս, հարցուց Բարակ»:

«Մարդը պատասխանեց. Հոս ամուսնացած եմ»:

«Ինչ շիտակ ըսիր, ըսաւ Բարակ: Երբ մէկը մարդու մը կ'ըսէ՝ Ո՞րքի՞ կու գաս, ան կը պատասխանէ՝ Անկէ ուրկէ որ կ'ինս կու գայ»:

«Մարդը ալ-Աֆշինի վերադարձաւ տեղեկութեամբ եւ նկարագրեց անոր բոլորը ինչ որ հոն տեսած էր Բարակէն: Որուն վրայ ալ-Աֆշին Ապու Սայիտը եւ Բուզբարահը Իպն Մնբատի գրեց, եւ անոնց հետ նամակ մը, եւ հրամայեց որ երբ որոշուած ճամբուն հասնին՝ նամակը զըրկեն Իպն Մնբատի, բնիկի մը հետ. անոնց սպասեց նաեւ որ անհնազանդ չըլլան Իպն Մնբատի, ինչ որ ալ ըլլան անոր յանձնարարութիւնները որոնք իրենց պիտի տայ»:

«Անոնք իրենց յանձնարարուածին պէս կատարեցին. Իպն Մնբատ իրենց գրեց որ իրեն յիշած մէկ վայրին մէջ մնան, զոր անոնց երկուքին ալ նկարագրեց՝ որպէսզի իր սուրհանգակը զիրենք գտնէ: Անոնք այդ վայրին մէջ սպասեցին, որ իրենց նրկարագրած էր. ան՝ անոնց մթերք եւ պաշար զրեց մինչեւ որ Բարակ ուզեց որսի երթալ: Իպն Մնբատ ըսաւ անոր. Հոս հովիտին մէջ օդը հաճելի է եւ դուն տխուր եւ այս բերդին խորքին մէջ, որով թող որ երբանֆ, առնելով բազէս եւ ննդկարագէս մեզի հետ եւ ամէն բան որ պէտք է: Մեմֆ մեր եղբերը պիտի վանեմֆ մինչեւ նաշի ատեն, որսալով»:

«Ինչպէս որ կը ցանկաս, պատասխանեց Բարակ»:

«Իպն Մնբատ այնպէս կարգադրեց որ երկուքն ալ ձիաւարեն առաւօտուն եւ ինք գրեց Ապու Սայիտի եւ Բուզբարահի, անոնց բսելով ինչ որ որոշած էր ընել եւ յանձնարարելով իրենց զօրքերով զինք զիմաւորել, լերան մէկ կողմէն՝ մին, եւ միւսն ալ միւս կողմէն: Անոնց հրամայեց գաղտնի ճամբորդել առաւօտեան աղօթքի պահուն. այն ատեն երբ իր սուրհանգակը իրեն հասնի՝ անոնք պէտք է բարձրանան հովիտին վրայ, եւ երբ անոնք զիրենք